

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/6

22 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Աննա Վարդանյանի 24.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.02.2016թ-ի թիվ 312726/02 որոշման դեմ:

Ա/Ձ Աննա Վարդանյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.02.2016թ-ի թիվ 312726/02 որոշման համաձայն Ա/Ձ Աննա Վարդանյանը ենթարկվել է վարչական տուգանքի, որի համար հիմք է հանդիսացել էրեբունու ՀՏ աշխատակիցների կողմից տրամադրված սխալ տեղեկատվությունը: Մասնավորապես, Ա/Ձ Աննա Վարդանյանը նշում է, որ էրեբունու ՀՏ աշխատակիցները հայտնել են, որ տարեկան ընտանեկան ձեռնարկատիրոջ հաշվետվությունը և ընտանեկան ձեռնարկատեր համարվելու դիմումն անհրաժեշտ է ներկայացնել 01.02.2016թ-ից մինչև 20.02.2016թ-ը: Սակայն, երբ Ա/Ձ Աննա Վարդանյանը 19.02.2016թ-ին այցելել է հարկային տեսչություն, տեղեկացել է, որ տարեկան հաշվետվությունը չներկայացնելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության: Ըստ գանգատի, Ա/Ձ Աննա Վարդանյանը տուժել է հարկային տեսչության աշխատակցի մեղքով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Աննա Վարդանյանը խնդրում է չեղարկել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.02.2016թ-ի թիվ 312726/02 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 19.12.2016թ-ի թիվ 923 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Աննա Վարդանյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 19.02.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 312726/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Աննա Վարդանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու և 20.000 դրամի չափով տուգանելու վերաբերյալ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները յուրաքանչյուր հաշվետու տարվա

համար մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած՝

1) հաշվետվություն՝ գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառության վերաբերյալ.:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն. «Հարկ վճարողը պարտավոր է՝

...

գ) սահմանված ժամկետում հարկային մարմին ներկայացնել (մասնավորապես ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ համաձայն սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 2-րդ հավելվածի, կամ ուղարկել փոստով՝ համաձայն սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 3-րդ հավելվածի, կամ հանձնել ըստ պատկանելության) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ.»::

Քննարկվող դեպքում Ա/Ձ Աննա Վարդանյանը պարտավոր էր մինչև 2016թ-ի փետրվարի 1-ը իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվությունը: Սակայն, նշված հաշվետվությունը ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ: Այսինքն, Ա/Ձ Աննա Վարդանյանի կողմից թույլ է տրվել զանցանք, որի համար կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.02.2016թ-ի թիվ 312726/02 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.Մ.ԻՐՈՒՄՅԱՆ